

պատիւ: ամեն ինչ կորցնում են և ստիպում ուրիշներին ևս կորցնել նոյնը, վեճերն և կռիւները մեծ մասամբ նորանից չեն յառաջանում: որ կռուող կողմերից ոչ մէկը միւսին մի քայլ տեղի տալ չէ կամենում:—Յայտնի է այն ճգնաւորի պատմութիւնը, որ հասկանալ չէր կարող թէ ինչիցն է կռիւ և պատերազմ լինում աշխարհի մէջ: Ընկերը մէջտեղ դրաւ մի փսեւթ, որ իւրաքանչիւրը իւր կողմը պէտք է քաշէր և պնդէր թէ իւրն է. այն ժամանակ հասկանալի պէտք է դառնար կռուի պատճառը, մի քանի անգամ քաշեցին, բայց միամիտ ճգնաւորը շուտով տեղի տուաւ՝ «քոն է, թող քոնը լինի»: ասելով, փորձը կրկնեցին ու երեքկնեցին և հետեանքը նոյնն եղաւ՝ ճգնաւորը չկարողացաւ այնուամենայնիւ հասկանալ կռուի պատճառը:—Եւ մեզ ամէնիս համար անհասկանալի և օտարօտի կլինէին հակառակութիւն, վեճ, բանսարկութիւն, խռովութիւն, նախանձ, թշնամութիւն՝ դատ և պատերազմ, եթէ այդ ճգնաւորի միամտութիւնն ունենայինք՝ Տիրոջ ցանկացած աղաւնոյ միամտութիւնը, առանց այս աշխարհի մէջ ապրողների համար անհրաժեշտ օձի խորամանկութիւնից զուրկ լինելու:



„ՊԵՏԱՐԱԳ“ ԲԱՌԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Պատարագ բառը զանազան նշանակութեամբ գործածուած է ի ս. Գիրս:

Մախ՝ կը նշանակէ զենիկ կենդանի, զոհ, յունարէն թիւսիա, զոր օր. «Չուեաց Խարսէլ, և եկն ի ջրհորն Երզման, և մատոյց պատարագ Աստուծոյ»:

Երկրորդ՝ նուէր, ձօն. յունարէն բրօսֆօրա, զոր օր. «Ընդ զոհս և ընդ պատարագըս ոչ հաճեցար», Սաղմ. ԼԹ. 7.—«Ոչ ողջակեզք և ոչ զոհք և ոչ պատարագ», Դան. Գ. 38:

Երրորդ՝ տուրք յունարէն դօրօն, և ամենայն ընծայ որ կը մատուցուի Աստուծոյ

կամ մեծի ումեք, նաև կաշառք, զոր օր. «Հայեցաւ Աստուած յԱբէլ և ի պատարագս նորա», Ժննդ. Գ. 4:—«Մատուցին նմա պատարագս՝ ոսկի, կնդրուկ և զմուռս», Մատթ. Բ. 11:—«Տարայք առնն պատարագս՝ ռետին և մեղր և խունկս», Ժնն. ԽԳ. 11:—«Ընծայս և պատարագս տանել միմեանց», Յայտ. ԺԱ. 10:

Իսկ ի նոր օրէնս՝ Բահանյադործութիւն ս. մարմնոյ և արեանն Բրիստօսի, զոր օրինակ, Պատարագ Բրիստօս մատչի գառն Աստուծոյ. Խորհրդատետր:—«Ընկալ հայր սուրբ մարգասէր, զպատարագս», Պատարագաւ հօր ի հօտ անուշից զմարմինդ առ ի մէնջ», Խորհրդատետր:

Պատարագի խորհուրդն երեք մաս կը բաժնուի՝ նուիրումն, սրբացուցումն և ծաշակումն. (Յայտնութիւն Աստուածգիտութեան երես292): Զարդիս ևս ընծայ կը նշանակէ Նուիրման պահուն. զոր օրինակ Պատարագ կօշի ընծայ, Խորհրդ. պտղ:—Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս յինէն ի մեղուցեալ և յանարժան ծառայէն քումմէ», Խորհրդ: «Ընկալ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս», այսինքն զընծայս, Խորհրդատետր: «Վասն այսօրիկ տամ քեզ նուէր նախ զհացս և զգինիս խորհրդով միածնիդ քո չարչարանաց», Մեկն. Պատ. Լմն. էջ 83:—«Եւ ընծայքն վերաբերին ի սեղանն», Խորհրդատետր:

Նոր կտուի պատարագին ստուերքն էին հնումն.

1. Աբէլի, Նոյի և Աբրահամու զոհերը. «Եւ իբր Տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան՝ և անարիւն զենման՝ զքահանայութիւն աւանդեցեր մեզ», Խորհրդատետր:

2. Մեքիսեղեկի հացն ու զինին. «Եւ Մեքիսեղեկ արքայ Սաղեմայ եհան հաց և զինի. քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ», Ժնդ. ԺԳ. 18:—«Զի Տէրն մեր փոխարկեաց զհացն ի մարմին իւր և զգինին ի յարիւն, և զնոյն առնել հրամայեաց աշակերտաց՝ առ ի լինել խորհուրդ եկեղեցւոյ, պարտ է զիտելը զի այս սուրբ խորհուրդ հաղորդութեան, ոչ միայն է խորհուրդ՝ որպէս այլ խորհուրդք եկեղեցւոյ, այլ նաև

է. զոհ հացի և գինւոյ որ զերազանցարար պարունակէ զամենայն զոհս և զպատարագս Հնոյ օրինի: Վասն զի որպէս գրի Երբ. Ե. 6. Բրիստոս ասի քահանայ ըստ կարգին Մեկքիսեղեկի որ մատոյց զհաց և զգինի և ոչ ըստ կարգին Ահարոնի որ մատուցանէր զանասունս: Մատթ. մեկնիչ. երես 741 Ե.:

3. Բաղարջակիրք կից պատէքի տօնին, յորում ուտէին հաց անխմոր. «Զեօթն օր բողարջ ուտիցէք, յառաջնմէ իսկ օրէ անտի անհետ տանիջիք զխմոր ի տանց ձերոց. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեացի անձն այն յիսրայելէ»: Եւրից. ԺԲ. 15:

4. Հաց Առաջաւորութեան կամ Առաջադրութեան, կամ Երեսաց. «Եւ հացքն առաջադրութեան ի վերայ սուրբ Սեղանոյն»: Բ. Մի. ԺԳ. 11:

Բրիստոս ճիշդ անխմոր հացին օրը կատարեց այդ խորհուրդը, ուստի պէտք է անխմոր և մասնաւոր հացով մը ընենք, և ճիշդն ալ այնպէս է, վասն զի հինը նորոյն ստուերն է, ստուերն ալ իւր ձեւը իրին ձեւին մօտ կառնու: Երեսէս Շնորհաւոյն ըսածին համեմատ. «Ընդ բողարջին՝ հաց անխմոր, եւ զմարմին իւր զերկնաւոր»: համ. Ա. Կորնթ. Ե. 7: Այսպէս և բացայայտ գրուած է ի ս. Գիրս. «Բողարջ հացիւ մատուցէ զպատարագն իւր ի վերայ զոհին փրկութեան»: Ղեւտ. Է. 13: Ուստի մեր եկեղեցին կը կատարէ բողարջ հացիւ. «Հաց պատարագին անխմոր պարտ է լինել, ըստ ասանկելոյ սրբոյ Լուսաւորչին»: Ը. Կանոն Բօնաննու իմաստասիրի եւ Կարնոյ ժողովոյն:—Արժան է և զհացն անխմոր հանել ի սուրբ սեղանն: Ատենաբալնութիւն Բօնաննու իմաստասիրի: Մի խնկեացես ի վերայ խմորոյ արիւն: Ասէ, ոչ խնկեացես, փոխանակ ասելոյ թէ ոչ մատուցես արիւն ընդ հացի խմորելոյ, այլ ընդ բողարջի: Մեկն. Եւրից. Կիւրդի Աղէքսանդրացոյն: Առ Երեսու հաց, օրհնեաց և երկի: Մատթ. ԻԶ. 26: հաց կոչէ ոչ զի էր խմորեալ, և այնու ասիւր հաց, այլ զի էր ցօրենոյ որ թէ խմորեալ իցէ՝ և թէ անխմոր՝ ասի հաց: Մեկն. Մատթէի երես 724: Ինչպէս մենք ալ նշխարը որ բողարջ է՝ կը կոչենք հաց. «Ինչ թողութեան մեղաց պարգեւեա ճաշակո-

յաց զհացս զայս և զգինի»: Խորհրդատետր. «Զոր օրհնութիւն կամ զոր զօհութիւն ի վերայ հացիս և բաժակիս ասացուք»: անդ: Սոյն ինքն Բրիստոս է որ հաց կըսուի. «Դառն և Երկնաւոր հաց»: անդ:—«Հաց կենաց բաշխիս ի մեզ»: Ժամագիրք:—Ով որ վասն մեր հաց եղեր, Լմր::

Յոյնք պատարագի խորհուրդին կատարումը Լիտուրգիա կրսնի, որ կը նշանակէ պաշտօն և է համաձայն ս. Գրոց. «Մինչդեռ ի պաշտաման տեսան կային, Գործ. ԺԳ. 2:—«Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազօրդ ի պաշտաման, և զնոյն պատարագս մատուցանէ բազում անգամ»: Երբ Ժ. 11: Բողոքականք կոչեցին ընթրիք Տէրունական, քանզի վերջին խորհրդաւոր ընթրիքէն ետքը հաստատուեցաւ այս խորհուրդը ինչպէս կըսէ Շնորհալին. «Եւրից զօրէնսն Մովսիսի, զոր խօսեցաւ ի Սինայի. եկեր դառն օրինակին՝ և բողարջն ընդ եղեգին. ըզհինն ի նորըս փոխելով զըստուերն ի լոյս ճշմարտելով. փոխան Դաւիթ ինքնն զօրով՝ Դառն Աստուծոյ նըրիւրելով: Շարական: Իսկ մեք Հայքս կը կոչենք պատարագ:»

Արդ յոր միտս վարի այս բառս ի մեզ և համաձայն է ս. Գրոց: Առաքեալք սոյն խորհուրդը հասկացնելու համար երկու բառ կը գործածեն, սակայ Հաց և դուն ուրեք Պաշտօն: Պաշտօն բառը Յոյնք իւրացուցեր են (թէպէտ և մենք ալ երբեմն ի միասին կը գործածենք՝ պաշտօն պատարագ ըսելով), մեզ կը մնայ Հաց բառը, զոր առհասարակ կը գործածեն առաքեալք. «Հացն զոր բեկանեմք՝ ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Բրիստոսի. զի մի հաց, մի մարմն, եւք բազումքս, զի ամենեքին ի միովէ հացէ անտի վայելեմք»: Ա. Կորն. Ժ. 16:—«Բանիցս անգամ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեսան պատմեցէք»: Ա. Կորնթ. ԺԱ. 26:

Առաքեալք բազմիցս միայն մէկ տեսակը, այսինքն հացը կը յիշեն լռելով միւս տեսակը՝ այն է գինին, մասն փոխանակ բոլորին առնելով, փոխանունութեան ձևով կը վարուին: Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, և առանին բեկանէին զհացն:

Գործ. Բ. 46. — «Եւ յաւուրն շարաթուց մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն»։ Գործ. Դ. 7. — «Այս է հացն, որ յերկնից իջեալ, ոչ որպէս կերան հարքն ձեր զմանաւնայն և մեռան, որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան»։ Յովհ. 2. 59. — «Եւ եղև ի բազմին նորա ընդ նոսա՝ առեալ զհացն՝ օրհնեաց, երեկ և ետ նոցա»։ «Եւ թէ զիրարդ ետ ծանօթըս նոցա ի բեկանել հացին»։ Դուգ. Խի. 35. Արդ, սոյն վկայութիւններէն կրնանք եզրակացնել, թէ օրինաւոր է նաև մէկ տեսակին անուանով կոչել, այն է խորհուրդ ս. Հացի յորջորջել, Սակայն հացը խմորուն է, թէ անխմոր՝ երկրայութեան տեղի չտալու համար պատշաճագոյն է ըսել խորհուրդ ս. բազարջի, իսկ մեր եկեղեցւոյ համար կարի յարմար է կոչել բազարջիկ կամ բազարջ փոքրիկ. քանզի մեր նշխարը որ նիւթ է պատարագին, ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ բազարջ փոքրիկ. ինչպէս որ յանձն առած ենք ապացուցանել քիչ մը յետոյ։

Հետազօտենք այժմ «պատարագ» բառին ծագումը կամ ստուգաբանութիւնը։

Հայկազեան բառարան՝ գանձարան Հայկական լեզուի պատարագ բառը նոյն կը համարի պարուստակ բառին հետ. «Պարուստակ կենդանի զենքի ի պէտս ուտելոյ կամ զօհելոյ, յորմէ և պատարագ. ռոճիկ յուտելի անասնոց, խաշն և արջառ, և այլն»։ տես ի ըստն պատրուածակ։ Բանասէր ոմն պէտերքերտէն պարսկերէն բայէն ծագում առած կը համարի, որ կը նշանակէ՝ արտաքսել, արտաքս հանել։ Նախ՝ անխարկել կամելով սարկաւազին «առ գրունս ելէք և աղօթեցէք» ազգարարութիւնը, քանզի նախնի քրիստոնէից ժամանակ սովորութիւն էր, որ ապաշխարողներն և հաղորդութեան արժան չեղողները սոյն միջոցին եկեղեցիէն դուրս կընէին խոնարհամտութիւնով և զրան առջև կաղօթէին, և կը զոցէին տաճարին զոները, որ անհաւատներն ու թերահաւատները չտեսնեն ս. Խորհուրդը, Երկրորդ՝ թերևս յենլով լատիններէն Մէսսա բառին (քանզի լատինացիք պատարագին Մէսսա կըսեն), որ կը նշանակէ նոյնպէս արտաքսել, սակայն ինչպէս որ ստուգեցի լատինագէտներէն, սոյն

բառը ոչ ոսկեղարեան, այլ նորամուտ է, մինչդեռ մերն է ոսկեղարեան և անոր քան զքրիստոնէութիւն։

Ննթաղութիւնք թէ այսպէս է, սակայն և այնպէս սոյն ստուգաբանութեան համեմատ ինչպէս կարելի է հաշտեցնել սա խօսքերը. «Վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս»։ — «Վասն մատուցեալ սուրբ և աստուածային պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զճէր աղաչեսցուք»։ Ժամագիրք. զորս պիտի հարկադրուինք թարգմանել՝ վասն սուրբ և անմահ արտաքսմանս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, և վասն մատուցեալ սուրբ և աստուածային արտաքսմանս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս։ Ինչպէս յայտնի կերևի, սոյն ստուգաբանութիւնը անյարմար և պէտերքերտէնէն ծագած ըլլալն ալ բռնադրօսիկ է և քաջքշուք։

Ըստ իս պարսկերէն «Ֆաղըրէք» նուագական անունն է, որ ի մեզ եղած է պատարագ և կը նշանակէ բազարջիկ կամ բազարջ փոքրիկ. (ինչպէս նաև սկի բառն ալ պարսկերէն սիկի բառն է, որ կը նշանակէ զինի, իսկ ի մեզ բաժակ, պարունակող փոխանակ պարունակելոյն). քանզի Ֆաղըր է արաբերէն բառ, և պարսկերէն օրինօք, այն է վերջը էք աւելնալով եղած է նուագական անուն, արաբերէն բառերն ալ պարսկերէն զպրութեամբ նուագական կը լլան ինչպէս են նաև հետևեալքն. զէնպիլ, զէնպիլէք՝ փոքր զամբիլ, այն, այնէք՝ ակնոց, դապլ, դապլէք՝ փոքր լիմուկ, (ռմկ. տիւնպիլէք), զէնպուր, մեղու, զէնպուրէք՝ զսպանակ և ըն։

Դալով տառադարձութեան՝ ֆէն փոխուած է պէ-ի, ինչպէս նաև հետևեալքն. գուֆի, կուպլ (կըպանք), ֆըս, պասէք, սէֆիտ, սպիտակ, ֆէլադուն, պղտուն, ֆիլֆիլ, պըղպեղ, ֆուլատ, պըղպատ, ֆէթա, եզ, ֆէթա-կան, յք, պատանի և ըն։

Դ-ըն փոխուած է տիւն-ի, ինչպէս նաև հետևեալքն. դաշթ, տաշտ (կոնք), պէյդար, պոյտառ, դումար, տումար, զըղ, կատու, շէյլան, սատան կամ սատանայ, պըղըկը, պատրիկ, Սուկրանդ, Սուկրա և ըն։

Բնաֆ-ը փոխուած է զիմ-ի, ինչպէս նաև

հեռեկալքն. քիւնպէտ, դմբէթ. քէնչ, կէնճ, գանձ. քնօս, դոս. քիւսան, գուսան և լին:

Ահաւասիկ Ֆաղրէք բառն ալ սոյն օրինօք եղած է ի մեզ պատարագ, որ ոչ միայն համաձայն է ս. Դրոց, այլև բացայայտ և մեկին, առանց տեղի տալու երկրպագութեան, թէ հացն խմորուն է թէ անխմոր:

Արդ սոյն ստուգարանութեամբ եթէ թարգմանենք վերի խօսքերը՝ կարի քաջ կը յարմարի. վասն սուրբ և անմահ բաղարջին որ ի վերայ սրբոյ սեղանոյս, և՛ վասն մատուցեալ սուրբ և աստուածային բաղարջիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս—որ է ձիւղ և ստոյգ նշանակութիւն. քանզի սոյն միջոցին սուրբ սեղանոյն վերայ գանուածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ բաղարջ փղբրիկ, այն է նշխար զոր կը մատուցանէ քահանայն, լուծով զգինին, զոր հասկընալու է զօրութեամբ, փոխանունութեան ձևով վարեալ:

Մերկերիոս Աղամեան.



ԾԻՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ
ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ.



Բնասարարիոյ Օրհնէ քաղաքի բնակիչ Ծովհաննէս Մալխասեան Մէյրէմ—Դուլի հեռեկալ հարցերի համար բացատրութիւն է խնդրել ս. Սինոդից.

«) Ինչո՞ւ մեր եկեղեցին ս. Ծովհաննէս Մկրտչի ծնունդը յունուարի մէջ է տօնում, մինչ, ըստ աւետեաց հրեշտակին, Բրիստոսի ծնունդից 6 ամիս առաջ պէտք է տեղի ունեցած լինի այն:

է) Արդեօք Վերափառ Հայրապետի Օծ-

* Սոյն ստուգարանութիւնն ուղարկել է Տաճկաստանից Թաթաւի Վարդ—Պատրիկեան վարժարանի գլխաւոր պ. Մ. Աղամեան՝ իբրեւ ձօն «սու նորին Ս. Սմարտիկ, Աստուածապատի Սրբազան Հայրապետն ամենայն Հայոց՝ երիմեան Հայրիկ»։—Թող Պատրիկի նկզինակը ներք մեզ, որ Արարատի ունի և պահպանելին համակերպելու համար ինչ ինչ կրօնաստեաններ կարեւոր համարեցին:

ման տարեդարձը շարժական տօն է, թէ անշարժ:

զ) Ինչպէ՞ս պէտք է խաչ հանել երեսը՝ երկը թէ հինգ մատով:

դ) Կարո՞ղ է քահանան եկեղ. զգեստներ կամ անօթներ գործ դնել, առանց նախապէս օրհնելու:

է) Եթէ Աւետեաց տօնը աւագ երկուշաբթի, երեքշաբթի կամ չորեքշաբթի է ընկնում՝ պէտք է պատարագ անել:

Ս. Սինոդի աւագ անդամ Գեր. Սարգիս արքեպիսկոպոսի յանձնարարութեամբ Արարատի միջոցաւ հաղորդելով այդ հարցերի համար մեր ձեռք բերած բացատրութիւնները՝ կցանկանայինք քաջալերել Պատրիկային այն անձանց, որոնք նման կասկածներ ունին ծիսական կամ առհասարակ կրօնական և բարոյական խնդիրների նկատմամբ, թիւրիմացութիւններ և զեղծութիւններ են տեսնում, որոնց առաջն առնել պէտք է՝ զիմել ուղղակի Արարատի Խմբագրութեան, լինի այդ նորանից բացատրութիւններ խնդրելու և լուծումն ստանալու նպատակով, թէ իրենց ունեցած բացատրութիւններն առաջարկելով:

«) Ս. Ծովհաննէս Մկրտչի Ծնունդը տօնելու ժամանակի սովորութիւն է. աւելի հին է այն սովորութիւնը, որով ս. Ծովհաննէսի, իբրեւ Աւետարանի առաջին վկայի և Տիրոջ կարապետի ու մկրտչի համար՝ մի ընդհանուր տօն էր կատարուում անմիջապէս ս. Յայտնութեան տօնի հետ կապուած և իբրեւ եկեղ. տարուայ առաջին տօն՝ ուրեմն մեզանում ս. Յայտնութեան ութօրեքի յաջորդ օրը կամ յունուարի 14-ին (եթէ կիրակէ լինի՝ 15-ին): Եւտայ երբ ուրիշ եկեղեցիներ սկսան ս. Ծովհաննէս ծնունդն առանձին տօնել մեր մէջ, չկամենալով երեւի մի նոր տօն աւելացնել և ծննդեան յիշատակը նախապատիւ համարելով՝ կայեցին այդ յիշատակը այն տօնի հետ, որ արդէն երկար ժամանակ է ի վեր հաստատուած և ժողովրդականութիւն ստացած էր: Աւելի հին է մեր մէջ այն տօնը, որ ս. Դրիգոր Լուսաւորիչ սահմանել է ս. Ծովհաննէս և Աթանագինէի նշխարները փոխադրելու առթիւ և որ թէև այժմ Հոփսիսմեանց տօնից յետոյ է կատարուում հինգ